

**Բաժին մը լատկացուր
կարօքաւորին**

Անոնք, որ շար հարսպութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դարարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անպանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարսպութիւնը գործածեցէ՛ք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք յաիքենական յարկերուն մէջ ընդունին» (Ղուկ. 16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Սիրոյ հեղանուս եղէք ու նաեւ նախանձախնդիր աղքատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի ստանաք» (Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թելեցնէ մեղքին ծանրութիւնը, բացի աղքատին արուած ողորմութենէն եւ գութէն: Ինչպէս սուրբ Դանիէլ Նաբուգոդոնոսորին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պարճառաւ հիւանդացած էր մարգարէին կը հարցնէր, թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ քորձը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգրակար ըլլալ, այլ գնա՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւ՛, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով: Այս արարքն է, որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաիքենական կեանքի պիտի առաջնորդէ» (Դանիէլ 4.27) :

ԴՊՐԱՊԵՏ

Բառը ինքնին կը բացատրէ իմաստը, դպիրներու պետ, դեկավար, ինչ որ կը նշանակէ երգեցողութիւնը առաջնորդող անձ:

Դպրապետը պարտի լաւ գիտնալ եկեղեցոյ Շարականները, տաղերը, մեղեդիներն ու ստեղծները, որոնք իրենց ձայնային բաժանմունքներով եւ ճիւղաւորումներով հմտութիւն կը պահանջեն: Նկատելով, որ մեր եկեղեցոյ ծիսակատարութեան մէջ մեծ տեղ կը գրաւէ շարականներու երգեցողութիւնը, ուստի անհրաժեշտ է, որ դպրապետը լաւ գիտնայ զանոնք:

Միանգամայն դպրապետը քաջ ծանօթ պէտք է ըլլայ, նաեւ մեր եկեղեցոյ ծիսակարգին, որպէսզի հեզասահ կերպով ընթանան արարողութիւնները եւ դաշն կերպով կատարուին երգեցողութիւնները:

Ան հետամուտ պէտք է ըլլայ դարաց դասի փորձերուն եւ աշխատի նուիրեալ դպիրներուն շարականներու ծանօթութիւնը ճիշտացնելու համար եւ սորվեցնելու, որպէսզի ճշգրիտ կերպով երգեն ու մեկնաբանեն մեր մատենագիր հայրերուն աւանդ ձգած հարստութիւնը:

Կարեւորութեամբ պէտք է արձանագրել, որ գլխաւոր աշխատանքները պէտք է ըլլան՝ եկեղեցիէն ներս դպիրներու զգաստ եւ լուրջ կեցուածքի հսկողութիւնը, նորագիր փոքր դպիրներու աչալուրջ հետեւիլը զանոնք խնամելը, սիրաշահիլը, անոնց մատղաշ հոգիներու մէջ եկեղեցոյ հանդէպ սէր ու ծառայութիւն սերմանելը, որպէսզի օր մը անոնք կատարեն դարաց դասի նուիրական աշխատանքը:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 2.1-21:

ՅԻՍՈՒՄ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 14.25-31

ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ (ՊԵՆՏԵԿՈՍՏԷ)

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ՝ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի: Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք: Լսեցէ՛ք, ինչ որ ըսի ձեզի, թէ. *«Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»*: Եթէ զիս կը սիրէք ուրախ պիտի ըլլաք, որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ, թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը՝ որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն:

Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք

Քրիստոս յաճախ իր աշակերտներուն կը փառաբանէր ըսելով մի՛ վախնաք, որովհետեւ վախը խաւարի որդիներուն կը պատկանի: Անոնք, որոնք Քրիստոսի լոյսը զգացած են, վախը գոյութիւն չ'ունենար անոնց կեանքին մէջ: Եւ ահա այսօր Հոգեգալուստի տօնին առիթով Քրիստոս կու գայ աւետարանի ճամբով յիշեցնելու բոլոր այն հաւատացեալներուն, որոնք Քրիստոսը ունին իրենց կեանքին մէջ, թէ պէտք է միշտ փառաբար ապրին իրենց կեանքը: Միշտ յիշեմք սաղմոսասացի խօսքը, որ կ'ըսէ. «Տէրն է իմ լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես: Տէրն է իմ կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ ես: (Սաղմոս 27. 1):

ՀՈԳԵԳԱԼՈՒՄ

Քրիստոսի Յարութենէն 50 օր ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով ժողովուրդ հաւաքուած էր Պենտեկոստէի առթիւ, առաքեալները Տիրոջ պատուէրին համաձայն վերնատուն հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դարձած կ'աղօթէին՝ սպասելով Ս. Հոգիին գալուստը, ինչպէս Յիսուս խոստացած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Առաքեալները զօրանալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք Երուսաղէմ հաւաքուած էին անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետրոս առաքեալի քառէն ետք, 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

Ս. Հոգեգալուստը եղաւ Հրեաներու Զատիկէն 50 օր ետք՝ Պենտեկոստէին, երբ Մովսէս մարգարէին միջոցաւ Աստուած հրեաներուն պարգեւեց Տասնաբանեան:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

– Որո՞նք են մարմնին թշնամի եւ կործանարար մոլութիւնները:

Եօթը մահացու մեղքեր կան, որոնք կը ծուարին մարդու ներսիդին եւ կը կրծեն գայն:

- 1.– Հպարտութիւնը կը կործանէ մարդը: (Առակ ԻԹ.23):
- 2.– Նախանձը ոսկորներու փտութիւն է: (Առակ.ԺԴ.30):
- 3.– Բարկութիւնը մարդուն վնաս կը պատճառէ (Առակ. ԺԹ.19), կը ցնցէ մարմինը ու կը տկարացնէ ջիղերը:
- 4.– Ծուլութիւնը իրեն ենթական կ'աղքատացնէ ու կը մեռցնէ: (Առակ. Ի. 13, ԻԱ.25):
- 5.– Ագահութիւնը իրեն անձնատուր երդոյններ կը մեռցնէ: (Առակ. Ա.19):
- 6.– Որկրամոլութիւնը (որուն ծիրին մէջ կ'իյնան նաեւ արբեցութիւնն ու ծխամոլութիւնը) բազմաթիւ հիւանդութիւններու դուռ կը բանայ: Ամենայն քաղցրահամ եւ օգտակար ուտելիքը՝ մեղրն անգամ եթէ մէկը անյագօրէն քաշակէ, գայն կը փսիւտ ու իր մարմնին առողջութեան վնաս կը բերէ: (Առակ. ԻԵ.16,27): Իսկ խմիչքներն ու ծխախոտի մոլութիւնները մարդու մարմինը կը գործն ալլազան հիւանդութեանց վիհին մէջ:
- 7.– Բիջախոտիւնը կ'ապականէ մարմինը, միտքն ու հոգին, ու մարդը կը մղէ դէպի անբարոյութիւն: (Մատթ. ԺԵ. 19):

Այս եօթը մոլութիւնները մարդուն մէջ կը յառաջացնեն անձնասիրութիւն, փառասիրութիւն, ցանկութիւն, անտեղի դժգոհութիւն, մտահոգութիւն, ջղային խանգարում, մեղամաղձոտութիւն եւ սրտի խոռովութիւն:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՅԻՍՈՒՄ ՄԵՐ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԱՂՔԻՐԻՆ Է

Հոս բերէք գայն (Մտթ. 17.17): Ոչ աշակերտները կըրցած էին բժշկել լուսնոտ պատանին եւ ոչ ալ Օրէնքի ուսուցիչները, ոչ Փարիսէցիները եւ ոչ ալ ժողովուրդէն ոեւէ մէկը: Անոր բժշկութեան միակ աղբիւրը, անոր փրկութեան միակ յոյսը մնացած էր Քրիստոս ինք, եւ պատանին հայրը շատ լաւ գիտէր այս իրողութիւնը: Ի՞նչ ըրաւ հայրը երբ տեսաւ ամէն դուռ փակ էր իր առջեւ: Իր զաւակը բերաւ Յիսուսի քով: Եւ գայն Յիսուսի քով բերելը՝ նոյնինքն Յիսուսի հրահանգն էր. Հոս բերէք գայն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Դժբախտաբար, դրուագին մէջ յիշուած մարդուն նման, այսօր որքա՛ն մարդիկ կան, որոնք Յիսուսի դիմելէ առաջ նախ կը դիմեն 76 իրենց նմաններուն, այս ինչ կամ այն ինչ հարցին գծով օգնութիւն ձեռք ձգելու համար եւ երբ տեսնեն, որ օգուտ մը չքաղեցին, այն ատեն միայն կ'որոշեն դիմել Յիսուսի: Հայրը իր զաւակին ազատագրութեան միակ աղբիւրը Յիսուսը նկատեց: Հետեւինք իր քայլերուն եւ նոյնը ընենք մենք:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, Կարդա՛ր ՍԱԳՄՈՍ 20

Տէ՛րը թող լսէ աղօթքներդ, երբ որ անձկութեան մէջ ես: Մեր հայրերուն Աստուածը ի՛նք թող պաշտպան ըլլայ քեզի: Քեզի օգնութիւն թող դրկէ իր սրբաբանէն, եւ Սիոնէն քեզ գօրացնէ: Տէ՛րը թող յիշէ քու նուէրներդ, եւ գոհերդ ընդունելի համարէ:

Տէ՛րը սրտիդ համեմատ թող տայ քեզի եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնձանք, եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք: Տէ՛րը կատարէ՛ բոլոր խնդրանքներդ:

Հիմա գիտցայ, որ Տէ՛րը կը փրկէ իր օժեալը, անոր աղօթքին պատասխան կուտայ իր սուրբ երկինքէն եւ իր գօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ: Ոմանք իրենց պատերազմի կառքերուն, ուրիշներ՝ ձիերու կ'ապաւինին, բայց մենք Աստուծոյ՝ մեր ՏԻՐՈՋ կ'ապաւինինք: Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան, մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:

Ո՛վ Տէ՛ր, փրկէ՛ թագաւորը, երբ քեզ կանչենք՝ պատասխանէ՛ մեր աղօթքներուն:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Զգաստութեան որպէս նախապայման իմաստութիւն ունեցիր եւ կեանքիդ բոլոր քանապարհներուն խոհեմ եղիր: Առակ 4